

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առատուրյան Հակոբ Հ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐ-
ԴԱՊԵՏ ԵՎ ՀԱՅ ՆՐԻԸ: Նյու-Յորք, Բեյրութ,
տպարան «Ատլաս», 1962, 91 էջ, նկարազարդ:

Սփյուռքահայ բանաստեղծ-երգիչ Հակոբ Ասա-
տուրյանի այս գիրքը կազմված է 1940—1959
թթ. ընթացքում գրված և հայկական զանազան
պարբերականներում լույս տեսած առանձին
հոգվածներին: «Կոմիտաս և հայ երգը», «Կո-
միտաս վարդապետ (մահվան տասնամյակին
առթիվ)», «Կոմիտասյան երգին բանահյուսու-
թյունը և Կոմիտասի քերթողական արվեստը»,
«Կոմիտաս իրրև հորինող», «Հայ երգի ոգին
(երգիչի մը մտածումները)» և «Արմենակ Շահ-
Մուրատյան»:

Հեղինակը վերլուծում է հայ երգի մեծ վար-
պետի ստեղծագործությունը և աշխատում է այն
մատչելի դարձնել ընթերցողների լայն շրջանակ-
ներին: Հակոբ Ասատուրյանը բարձր է գնա-
հատում Կոմիտասի գերը. «Գյուղն գյուղ, արտն
արտ և ասողն ասող շատ անգամ քարի մը շու-
թին և կամ տանիքի մը վրա զաղտնի կկած»
այն սեպերեց շատ մը տարրեր փոփոխակները
նույն գեղջուկ երգերուն»:

Ընդհանուր առմամբ գիրքը Կոմիտասի կյան-
քի ու գործի բազմակողմանի ուսումնասիրու-
թյունն է՝ անշուշտ սեղմ սահմաններում: Հա-
մեմատարար ավելի մանրակրկիտ են ուսումնա-
սիրված Կոմիտասյան երգի բանահյուսությունը
և արվեստը:

«Մեր սկզբնական բաղձանքն էր՝ պատրաս-
տել Կոմիտաս Վարդապետի կյանքն ու գործը
ներկայացնող ոչ-մասնագիտական, այլ ամբող-
ջական հատոր մը, մատչելի ժողովուրդի լայն
խավերուն»,— գրում է հեղինակը առաջաբանում:

Եղգարյան Ա.Վ. քաճաճա. ԻՐԱՆԻ ՉԱՐ-
ՄԱՆԱԿ ԳԻՒՂԱԿՈՒԸ: ԽԷՆԴԱՆ, տպարան «Անի»,
1963, 194 էջ, նկարազարդ, 1 քարտեզ:

Ինչպես հայտնի է, Չհարմհալի հայ գաղութը
կազմվել է Հայաստանի Բասեն գավառի հայնե-
րից, որոնք Պարսկաստան գաղթեցվեցին XVII
դարի սկզբում: Եղգարյանն իր գիրքն սկսում է
Չհարմհալի տոհմագրությունով, որի համար ու-
սումնասիրել է տապանագրերը: Գրքում տեղե-
կություններ կան գավառի աշխարհագրական
դիրքի, կլիմայի և տնտեսական դրության, ազ-
գային հաստատությունների, մասնավորապես
ղպրոցների ու մշակութային միությունների վե-
րաբերյալ:

Գրքում տեղ են գտել նաև բանահյուսական
նյութեր՝ Չհարմհալի լեզուն, ժողովրդական բա-

նահյուսությունը, առածները, հանելուկները,
ասացվածքները, խաղերն ու երգերը: Ազգա-
գրական տեսակետից հետաքրքրական են Չհար-
մհալի ընտանեկան սովորություններին ու ազ-
գային բարքերին նվիրված հատվածները և
մանավանդ չհարմհալեցի զանազան տարիքի
և սեռերի ներկայացուցիչների տարազները՝
իրենց նկարներով և մանրամասն նկարագրու-
թյուններով: Գրքի բազմաթիվ էջերում հանդի-
պում ենք վիճակագրական տեղեկությունների՝
այդ գավառի հայ գյուղերի և նրանք բնակչու-
թյան վերաբերյալ: Աշխատության վերջում խոս-
վում է Չհարմհալի ներկա վիճակի մասին:

Démirdjian Téréniq. VARTAN-
NANC. Roman historique traduit de l'armé-
nien par Dikran Kirazian. Présenté et adap-
té par Victor Gardon. Paris, Editions Stock,
1963, p. 328.

Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի
ֆրանսերեն հրատարակությունն է, որը լույս է
լինծայել Փարիզի «Ստոք» հրատարակչությունը:
Հայերենից թարգմանությունը կատարել է վեր-
ջին տարիներում եգիպտոսից Ֆրանսիա տեղա-
փոխված Տիգրան Քիրազյանը: Դիրքը ներկա-
յացրել է Վիկտոր Գարգոնը (Վահրամ Կաթավ-
յան): 451 թ. Ավարայրի ճակատամարտի ժա-
մանակաշրջանի Հայաստանի քարտեզին հաջոր-
դում է Գարգոնի կարճ ներածականը, որն ա-
վարտվում է Դ. Դեմիրճյանի մասին կենսագրա-
կան համառոտ տեղեկանքով: Գարգոնը հայտնի
է մինչև այժմ հրապարակ հանած իր հետաքր-
քրական երկու վեպերով՝ «Կյանքի կանաչ
արեը» («Le vert soleil de la vie») և
«Զմրուխտակիր ասպետը» («Le chevalier
a l'émeraude»): Այս երկու գեղարվեստական
երկերն էլ ընդգրկում են առաջին համաշխար-
հային պատերազմին նախորդող տարիները և
Վանի հերոսական ինքնապաշտպանության պատ-
մությունը:

Utudjian Edouard. MISSION
TECHNIQUE EN ARMENIE. Paris, Editions
«Le Monde Souterrain», 1962, p. 140, ill.

«Le Monde Souterrain» ամսագրի հրա-
տարակչության գիրքակտոր էղվարդ Ություճյանի՝
նույն ամսագրի 1961 թ. համարներում տպագրե-
ված հոգվածների ամբողջական հրատարակու-
թյունն է: Ե. Ություճյանի հեղինակությամբ լույս
են տեսել 15 գրքեր և բազմաթիվ հոգվածներ
քաղաքաշինարարության, ճարտարապետության և

հայկական ճարտարապետության վերաբերյալ, ներկա ժողովածուն հարուստ է պատմագրական, լուսանկարչական և տեխնիկական վավերաթղթերով:

Առանձին ենթաբաժիններում նյութեր կան արտասահմանյան զանազան երկրներում ապրող հայերի, նրանց անցյալի ու ներկայի մասին: Հեղինակը տեղ է հատկացրել պատմական և արդի Հայաստանի աշխարհագրությանը և ազգագրական նյութերին: Համառոտակի տեղեկություններ են տրվում նաև հայերեն գրերի, հայ գրականության, երաժշտության, թատրոնի, նրկարչության, քանդակագործության և մանրանկարչության վերաբերյալ: Գիրքը շատ ամփոփ ձևով ներկայացնում է հայկական մշակույթը օտար ընթերցողներին: Ամբողջությամբ վերցրած այս հրատարակությունը մի հիշատակարան-ալբոմ է հայկական ինքնատիպ ճարտարապետության վերաբերյալ բազմաթիվ պատկերներով, գծաքրություններով և բացատրություններով ճշխացված:

Աշխատությունը վերջանում է հայկական ճարտարապետության մասին համառոտ մատենագիտական մի ցուցակով, որտեղ հանդիպում ենք էան ընդհանրապես հայ մշակույթի վերաբերյալ կարևոր գրքերի: Մատենագիտական յանկն ընդգրկում է ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և հայերեն 400-ից ավելի աշխատություններ:

LE DEUIL NATIONAL ARMENIEN.
Par R. Donikian, J. Nazarian et
V. Solacian. Gardanne, Centre d'Etudes
Arméniennes, Imprimerie Moderne, 1964,
p. 136, ill., 1 carte.

«Հայ ազգային սուգը» ժողովածուում զետեղված են Ռ. Դոնիկյանի, Վ. Սուլակյանի և Վ. Նազարյանի ուսումնասիրությունները՝ նվիրված մեծ Լեոնի 50-րդ տարելիցին:

Դոնիկյանին է պատկանում «Հայերը» (էջ 13—25) գլուխը, որտեղ հեղինակը համառոտակի ներկայացնում է Հայաստանի աշխարհագրությունը և պատմությունը՝ ըստ առանձին ժամանակաշրջանների. «Հայկական հարցը 1878-ից մինչև մեր օրերը» մասում առանձնակի տեղ է հատկացված 1915 թ. եղեռնին: «Հայերը» գլխի մասն է կազմում նաև «Հայերի նպաստը համաշխարհային քաղաքակրթության մեջ» ենթաբաժինը, որտեղ շատ համառոտակի բնութագրված են հայկական արվեստի զանազան ճյուղերը՝ ճարտարապետություն, երաժշտություն, մանրանկարչություն և այլն:

«Ջարդերը» (էջ 29—83) գլխում Դոնիկյանը ավելի ընդարձակ գրում է թուրք տիրապետողների կողմից իրագործված հայերի զանգվածա-

յին կոտորածի պատճառների մասին: Ինքնաված են ուրիշների վկայությունները: Դիմելով բազմաթիվ փաստերի և ականատեսների վկայությունների, հեղինակը նկարագրում է Կիլիկիայի ջարդերը, Տրապիզոնի, Էրզրումի, Սվադի, Խարբերդի, Բիթլիսի, Վանի և Դիարբեքիրի վայրային կոտորածները, որոնց հաջորդում են Ալեմտյան Անատոլիայի վիլայեթների (Իզմիր, Կոնիա, Յոզղաթ, Անկարա և այլն) դեպրերը:

Գրքում առանձին տեղ է հատկացված տեղահանություններին: Ցույց է տրված, որ արսորյալ հայերը հիմնականում բռնեցին երկու ուղղությամբ՝ դեպի Սուլթանիե, այսինքն Թուրքիայի կենտրոնական անապատները և դեպի Միջագետքի անապատները: Բազմաթիվ առիթներով, բերված են Թալեաթի հրամանները՝ հայերին լքելով բնաջնջելու վերաբերյալ:

Վարդգես Սուլակյանի «Ջարդերը և աշխարհը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում» (էջ 85—103) ուսումնասիրության մեջ հատուկ շեշտված է այն փաստը, որ դեռևս 1915 թ. աշնանը ամբողջ աշխարհին հայտնի էին հայկական ողբերգության առաջին դեպքերը՝ Եվրոպայի և ԱՄՆ-ի խոշոր պարբերականների միջոցով. այնուհետև թվարկված են 1915, 1916 և հետագա տարիներում տպագրված օտար լեզուներով այն բազմաթիվ գրքերը, որոնցում նկարագրված են հայկական կոտորածները ամենայն մանրամասնություններով: Իյնուամենայնիվ, արևմտյան տերությունները զլացան իրենց միջնորդությունը՝ վերջ տալու համար այդ արյունահեղություններին, իսկ Թուրքիայի կառավարողները շարունակեցին իրենց վայրագությունները, և այն, ինչ չէր կարողացել անել սուլթան Համիդը 30 տարիների ընթացքում, արեց Թալեաթը երեք ամսում:

Ժաք Նազարյանը գրել է այս գրքի ներածականը, ինչպես նաև 105—136 էջերը, որոնցում ուշադրության արժանի են «Ջարդերի հետևանքները» ուսումնասիրությունը և գրքի Լզրակացությունը:

Գրքում տեղագրված է «Հայերի ջարդերը և տեղահանությունները 1915 թ.» քարտեզը, որը գծագրել է Վարդգես Սուլակյանը՝ ըստ Զատիկ Խանզադյանի 1960 թ. լույս տեսած «Հայաստանի պատմական աշխարհագրության քարտեզ»-ի:

DAREDEVILS OF SASSOUN, The
Armenian National Epic by Leon Surme-
lian. illustrated by Paul Sagsoorian. Alan
Swallow, Denver, 1964. An Armenian Ge-
neral Benevolent Union Golden Jubilee
Publication. p. 280.

Ամերիկահայ նշանավոր գրող Լեոն Ջավենի Սյուրմելյանը անգլերենի է թարգմանել «Սասնա

Մոեբր», հիմնականում ոգտագործելով Մանուկ Լեքեղյանի և Կարո Մելիք-Ոհանջանյանի կազմած համահավաք տեքստը:

«Սասնա Մոեբր» դյուցազներգության անգլերեն այս հրատարակությունը, որպես այդ լեզվով առաջին ամբողջական հրատարակություն, իիստ կարևոր գրական մի ձեռնարկ է, այս գրքով է. Մյուրմելյանը մեծապես սատարել է հայ ժողովրդական վեպի մասսայականացմանն ու զնահատմանը՝ արևմտյան աշխարհում:

«Ձեզ եմ դիմում տիկիներ և պարոններ» խորագրով ինքնակենսագրական հատորով և բազմաթիվ պատմվածքներով հռչակված հեղինակը իր պարզ ու անսեթևեթ ոճը պահպանել է նաև միջնադարյան այս դյուցազներգության թարգմանության ընթացքում, միաժամանակ ցուցաբերելով նաև դիտական վերաբերմունք:

Գրքի ընդարձակ ներածականում (էջ 7—32) մանրամասն տեղեկություններ են տրված «Սասնա Մոեբր» ժողովրդական վեպի հիմնական նյու-

թի՝ պատմական եղելությունների, իրական դեմքերի ու անցքերի մասին, վեպի ծագման, նրա գլխավոր հերոսների և այդ հերոսների շուրջ խմբված ուրիշ գործող անձանց մասին: Ներածականում խոսվում է նաև «Սասնա Մոեբր»-ի պատումների, տարբեր ժամանակներում նրա հրատարակությունների և «Սասնա Մոեբր»-ի էջերում նկարագրված ժողովրդական կյանքի մասին: Լեռանձնապես շահեկան է ներածականի այն մասը, որտեղ «Սասնա Մոեբր»-ը համեմատելով համաշխարհային հանրահայտ էպիկական մյուս ստեղծագործությունների հետ, այն վեր է հանված որպես բանաստեղծական, մարդասիրական և մոնումենտալ մի դյուցազնավեպ, որը մարդկությանը հաղորդակից է դարձնում մեր ժողովրդի մտածումներին ու բարքերին:

Գիրքը գեղարվեստորեն նկարագարողել է Պ. Սակսուրյանը:

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ